/Ծանուցման հիմք՝ ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի պաշտոնական էլ. փոստից / araqs.hamaynq@gmail.com / «Վոլֆենգրուպ» ՍՊԸ-ի տնօրենի կողմից ներկայացված էլեկտրոնային փոստին /wolfengroup@yandex.com/ ծանուցագիրը 2023 թվականի սեպտեմբերի 1-ին ուղարկված լինելու փաստը/:

Վարչական ակտն ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի ղեկավարի 2023 թվականի հունվարի 9-ի N 4-Ա կարգադրությամբ ստեղծված հանձնաժողովի կողմից 2023 թվականի օգոստոսի 1-ին կազմված արձանագրությունը:

Արաքս համայնքի ղեկավարի 2023 թվականի օգոստոսի 31-ի «Վոլֆենգրուպ» ՍՊԸ-ի տնօրեն Մյասնիկ Հովաննիսյանին ուղղված Վարչական վարույթ հարուցելու մասին ծանուցագիրը և այն ստացած լինելու փաստը հավաստող ապացույց:

ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի ղեկավարի 2023 թվականի օգոստոսի 31-ի N 2433 գրությունը «Վարչական վարույթ հարուցելու մասին» ծանուցելու վերաբերյալ ուղղված «Վոլֆենգրուպ» ՍՊԸ-ի տնօրրեն Մյասնիկ Հովաննիսյանին /Ծանուցման հիմք՝ ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի պաշտոնական էլ. փոստից /araqs.hamaynq@gmail.com/ «Վոլֆենգրուպ» ՍՊԸ-ի տնօրենի կողմից ներկայացված էլեկտրոնային փոստին /wolfengroup@yandex.com/ ծանուցագիրը 2023 թվականի սեպտեմբերի 1-ին ուղարկված լինելու փաստը:/

ՀՀ Արմավիրի մարզի Արաքսի համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի առաջատար մասնագետի 2023 թվականի սեպտեմբերի 16-ի զեկուցագիրը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները և հիմք ընդունելով վերոհիշյալ փաստերը վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

«Վոլֆենգրուպ» ՍՊԸ-ի տնօրեն Մյասնիկ Հովաննիսյանի կողմից Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի Ջրառատ գյուղում ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող 10.039165 հա մակերեսով, 04-085-0201-0025 կադաստրային ծածկագրով հողամասը ոչ նպատակային և գործառնական նշանակությամբ է օգտագործվում, այն է՝ կատարվում է ավազի արդյունահանում:

Արդյունքում Արաքսի համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի առաջատար մասնագետի կողմից 2023 թվականի սեպտեմբերի 16-ին զեկուցագիր է ներկայացվել Արաքս համայնքի ղեկավարին և առաջարկվել՝ իրավախախտող «Վոլֆենգրուպ» ՍՊԸ-ի տնօրեն Մյասնիկ Հովաննիսյանին ենթարկել վարչական պատասխանատվության և նշանակել վարչական տուգանք ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի վերը նշված դրույթների խախտման չափերով՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի և հինսապատիկի չափերով՝ 150.000 /մեկ հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ:

Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 26-րդ կետի՝ համայնքի ղեկավարը, օրենքով նախատեսված դեպքերում և կարգով անձանց ենթարկում է վարչական պատասխանատվության:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 8-րդ կետի՝ համայնքի ղեկավարը, որպես սեփական լիազորություն, կանխարգելում ու կասեցնում է ինքնակամ շինարարությունը և օրենքով սահմանված կարգով ապահովում է դրանց հետևանքների վերացումը, ընդունում է համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) մասին որոշում և իր լիազորությունների շրջանակներում օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովում է ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) մասին որոշման կատարումը, 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ և 5-րդ կետերի համաձայն՝ օրենքով սահմանված կարգով վերահսկողություն է իրականացնում համայնքի վարչական սահմաններում գտնվող հողերի նպատակային օգտագործման, հողօգտագործողների կողմից հողային օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ: Օրենքով սահմանված դեպքերում և կարգով կանխարգելում, կասեցնում և վերացնում է ապօրինի հողօգտագործումները:

Համաձայն ՀՀ հողային օրենսգրքի 8-րդ հոդվածի 1-ին մասի, 9-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի պահանջների՝ հողամասի թույլատրված օգտագործումը հողամասի օգտագործումն է դրա նպատակային և գործառնական նշանակությամբ, ներառյալ՝ սահմանված իրավունքները և սահմանափակումները: Հողամասի թույլատրված օգտագործումը սահմանվում է նորմատիվ իրավական ակտերի, հողերի օգտագործման սխեմաների, հողաշինարարական այլ փաստաթղթերի, գլխավոր հատակագծերի ու քաղաքաշինական գոտիավորման նախագծերի հիման վրա: Գյուղատնտեսական նշանակության հողեր են համարվում գյուղատնտեսական կարիքների համար առանձնացված և գյուղատնտեսական գործունեություն ծավալելու նպատակով գյուղատնտեսական մշակաբույսերի մշակման, բազմամյա տնկարկների հիմնման, խոտհնձի, անասունների արածեցման, ինչպես նաև գյուղատնտեսական այլ նպատակների համար նախատեսված հողատեսքերը: Գյուղատնտեսական նշանակության հողերը, ըստ հողատեսքերի, բաժանվում են՝ վարելահողերի, բազմամյա տնկարկների, խոտհարքների, արոտավայրերի, այլ հողատեսքերի: Նույն օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ համայնքի ղեկավարը կանխարգելում, կասեցնում և վերացնում է ապօրինի հողօգտագործումը համայնքի վարչական սահմաններում, օրենքով սահմանված դեպքերում ու կարգով հողային օրենսդրության պահանջները խախտողների նկատմամբ կիրառում է վարչական տույժեր, ինչպես նաև իրավասու մարմիններ է ներկայացնում հաղորդումներ՝ իրավախախտում թույլ տված անձանց՝ օրենքով սահմանված պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ:

Համաձայն «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 5-րդ պարբերության՝ քաղաքային և գյուղական համայնքների տարածքներում համայնքի ղեկավարը վերահսկում է կառուցապատողներին տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքների, բնակավայրերի քաղաքաշինական կանոնադրության պահանջների կատարումը, հողերի և ամրակայված գույքի քաղաքաշինական նպատակային օգտագործումը, ինչպես նաև կանխարգելում, կասեցնում է ինքնակամ շինարարության դեպքերը և օրենքով սահմանված կարգով ապահովում է դրանց հետևանքների վերացումը:

· Տվյալ պարագայում «Վոլֆենգրուպ» ՍՊԸ-ի տնօրեն Մյասնիկ Հովաննիսյանի կողմից ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող 10.039165 հա մակերեսով, 04-085-0201-0025 կադաստրային ծածկագրով · հողամասը

/նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ արոտավայր/ օգտագործվում է ոչ նպատակային և գործառնական նշանակությամբ, այն է՝ կատարվում է ավազի արդյունահանում:

Արդյունքում տեղի է ունեցել Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 54-րդ հոդվածի 1-ին և 2-րդ պարբերություններով խախտումներ, այն է՝ հողամասերը ոչ նպատակային նշանակությամբ օգտագործելը, որն առաջացնում է տուգանքի նշանակում քաղաքացիների նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով: Հողամասերի գործառնական նշանակությունը և հողատեսքերի ինքնակամ փոփոխելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում քաղաքացիների նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետով, 42-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ և 5-րդ կետերով, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 54-րդ հոդվածի 1-ին և 2-րդ պարբերություններով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 8-րդ և 9-րդ հոդվածներով, 43-րդ հոդվածի 2-րդ մասով, «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի 5-րդ պարբերությամբ, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով, հիմք ընդունելով Արաքսի համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի առաջատար մասնագետի կողմից ներկայացված զեկուցագիրը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Իրավախախտող «Վոլֆենգրուպ» ՍՊԸ-ի տնօրեն Մյասնիկ Հովաննիսյանի նկատմամբ նշանակել վարչական տուգանք՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի Ջրառատ գյուղում ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող 10.039165 հա մակերեսով 04-085-0201-0025 կադաստրային ծածկագրով հողամասը /նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ կամ հողատեսքը՝ արոտավայր/, ոչ նպատակային և գործառնական նշանակությամբ օգտագործելու համար, այն է՝ կատարվում է ավազի արդյունահանում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի և հիսնապատիկի չափերով՝ 150 000 /մեկ հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ:
2. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 305-րդ հոդվածի համաձայն՝ տուգանքը պետք է վճարվի սույն որոշումն իրավախախտում կատարողի կողմից իրազեկվելուց ոչ ուշ քան տասնհինգ օրվա ընթացքում՝ ֆինանսների նախարարության 900325165232 հաշվեհամարին, ստացող՝ ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնք:
3. Իրավախախտող «Վոլֆենգրուպ» ՍՊԸ-ի տնօրեն Մյասնիկ Հովաննիսյանին տալ պարտադիր ցուցում՝ անհապաղ դադարեցնել նշված հողամասի ոչ նպատակային օգտագործումը և 5-օրյա ժամկետում ներկայացնել մասնակի ներկայացված փաստաթղթերի ամբողջական հավաքածուն:

4. Սույն որոշումը կարող է դատական կարգով բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 70-րդ և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ, 73-րդ հոդվածներով նախատեսված կարգով՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:
5. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կողմերին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից կամ սույն որոշմամբ ուղղակիորեն շոշափվող անձանց վերաբերյալ տեղեկությունները հայտնի չլինելու դեպքում հրապարակման պահից՝ Համայնքապետարանի և Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում:

ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ

2023 թվականի սեպտեմբերի 18
Արաքս համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 093554477
araqs.hamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 սեպտեմբերի 2023թվականի N 959-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹՆԵՐ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության համակարգող նախարարի 2006 թվականի օգոստոսի 29-ի N 13-Ն հրամանով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. 2023 թվականի հոկտեմբերի 20-ին՝ ժամը 10:30-ին նշանակել և անցկացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքսի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարության,անձնակազմի կառավարման,տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի առաջատար մասնագետի /ծածկ. 3.1-8/ թափուր պաշտոնի մրցույթ:

2. 2023 թվականի հոկտեմբերի 20-ին՝ ժամը 12:00-ին նշանակել և անցկացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքսի համայնքապետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության բաժնի առաջին կարգի մասնագետի /ծածկ. 3.2-5/ թափուր պաշտոնի մրցույթ:

3. Մրցույթի նախապատրաստական աշխատանքներն իրականացնել «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի և ՀՀ տարածքային կառավարման նախարարության

համակարգող նախարարի 2006 թվականի օգոստոսի 29-ի N 13-Ն հրամանի պահանջներով:

4. Մրցույթի տեխնիկական սպասարկման աշխատանքները կազմակերպելու, մրցույթի մասին հայտարարություն հրապարակելու համար լիազոր անձ նշանակել Մ.Ազատյանին:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՂԱՋԱՐ ՂԱՋԱՐՅԱՆ

2023թ. սեպտեմբեր 19
Արաքս համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 093554477
araqs.hamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 սեպտեմբերի 2023թվականի N 960-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՌԱՏԱՇԵՆ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 1-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N286 որոշմամբ հաստատված հավելվածի 6-րդ կետով և հիմք ընդունելով քաղաքացի Սուրեն Ռզայի Սադոյանի 2023 թվականի սեպտեմբերի 12-ի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Արաքս համայնքի Առատաշեն գյուղում Իսահակյան 71/1 հասցեում գտնվող 04-013-0061-0037 կադաստրային ծածկագրով 286,1քմ. մակերեսով արտադրական նշանակության օբյեկտների հողամասը ուղղակի վաճառքով օտարել անասնաշենքի սեփականատեր Սուրեն Ռզայի Սադոյանին:
2. 1քմ. հողի գինը կազմում է 792. Հայաստանի Հանրապետության դրամ, 792*286,1քմ=226591 /երկու հարյուր քսանվեց հազար հինգ հարյուր իննսունմեկ/ Հայաստանի Հանրապետության դրամ:
3.Հողամասի օտարման 226591 Հայաստանի Հանրապետության դրամ գումարը վճարել Առատաշեն գյուղի N900325153147 հաշվեհամարին:
4.Որոշման ընդունման օրվանից սահմանված վճարը 10-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:
5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՂԱԶԱՐ ՂԱԶԱՐՅԱՆ**

2023 թվականի սեպտեմբերի 19
Արաքս համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գայ, Ա. Խաչատրյան 1, araqs.hamaynq@gmail.com, հեռ.՝ (093)554477

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 սեպտեմբերի 2023 թվական N 961-Ա

ԱՐԹՈՒՐ ՇԻՐԻՆԻ ՉՈԼՈՅԱՆԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի ղեկավարը քննության առնելով վարչական գործը՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի Գայ գյուղի վարչական տարածքում Արթուր Շիրինի Չոլոյանի կողմից չսահմանված վայրում կենսաբանական թափոններ թափելու վերաբերյալ, ***պարզեց հետևյալը.***

Արթուր Շիրինի Չոլոյանը /հասցե՝ ՀՀ, Արմավիրի մարզ, Արաքս համայնք, գ. Գայ, Սարյան 3փ., 39տ./ թույլ է տվել Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 43.1-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված խախտումներ:

Վերը նշվածի կապակցությամբ Արաքսի համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի կողմից հարուցվել է վարչական վարույթ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի և նույն օրենքի 34-րդ հոդվածով սահմանված կարգով, ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 43.1-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված պահանջների խախտման փաստով:

Արթուր Շիրինի Չոլոյանը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 29.1-րդ հոդվածի համաձայն, ՝պատշաճ ծանուցված էր վարչական վարույթի անցկացման վայրի և ժամանակի մասին /Ծանուցման հիմք՝ «Հայփոստ» ՓԲ ընկերության կողմից 2023 թվականի օգոստոսի 22-ին տրված LO110916092AM ստացականը և 2023 թվականի սեպտեմբերի 8-ին առաքանին հանձնված լինելու վերաբերյալ էլեկտրոնային ապացույց/:

Վարչական ակտն ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

ՀՀ Արմավիրի մարզի Արաքսի համայնքապետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջատար մասնագետ Արման Ղուկասյանի կողմից 2023 թվականի օգոստոսի 17-ին կազմված արձանագրությունը:

Արաքս համայնքի ղեկավարի 2023 թվականի օգոստոսի 21-ի Արթուր Շիրինի Զոլոյանին ուղղված Վարչական վարույթ հարուցելու մասին ծանուցագիրը և այն ստացած լինելու փաստը հավաստող ապացույց:

ՀՀ Արմավիրի մարզի Արաքսի համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի առաջատար մասնագետի 2023 թվականի սեպտեմբերի 18-ի զեկուցագիրը:

Արդյունքում Արաքսի համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի առաջատար մասնագետի կողմից զեկուցագիր է ներկայացվել Արաքս համայնքի ղեկավարին և առաջարկվել՝ իրավախախտող Արթուր Շիրինի Զոլոյանին ենթարկել վարչական պատասխանատվության և նշանակել վարչական տուգանք ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 43.1-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված դրույթների խախտման չափով՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քառասնապատիկի չափով՝ 40.000 /քառասուն հազար/ ՀՀ դրամ:

Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 26-րդ կետի՝ համայնքի ղեկավարը, օրենքով նախատեսված դեպքերում և կարգով անձանց ենթարկում է վարչական պատասխանատվության:

Համաձայն Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 43.1-րդ հոդվածի 3-րդ մասի 10-րդ կետի՝ «3. Չսահմանված ու չնախատեսված տեղերում և վայրերում աղբամուղներից, աղբահավաք խցերից, աղբարկղերից, աղբամաններից կամ աղբահավաք մեքենաներից, ինչպես նաև սահմանված կարգով կազմակերպված կամ նախատեսված փոխաբեռնման կայաններից կամ աղբավայրերից դուրս՝ 10) կենսաբանական թափոններ (կենդանական ծագման պարենային և ոչ պարենային հումքի վերամշակումից ստացված թափոններ, ինչպես նաև անասնապահական, թռչնաբուծական և ձկնաբուծական ձեռնարկությունների գործունեության հետևանքով առաջացած թափոններ) թափելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում ֆիզիկական անձի նկատմամբ՝ նվազագույն աշխատավարձի քսանապատիկից երեսնապատիկի չափով, իսկ իրավաբանական անձի նկատմամբ՝ հարյուրապատիկից երկուհարյուրապատիկի չափով», նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «4. Սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված վարչական իրավախախտումները ջրային համակարգերում, այդ թվում՝ ոռոգման ջրանցքներում, ինչպես նաև սանիտարական պահպանման գոտիներում կատարելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ տվյալ արարքի համար սույն հոդվածով նախատեսված տուգանքների չափերի կրկնապատիկի չափով»:

Համաձայն «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի՝ արգելվում է աղբը պահել և թափել դրա համար չսահմանված կամ չնախատեսված վայրերում:

Այսպիսով տեղի է ունեցել ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 43.1-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված խախտումներ, այն է՝ «Սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված վարչական իրավախախտումները ջրային

համակարգերում, այդ թվում՝ ոռոգման ջրանցքներում, ինչպես նաև սանիտարական պահպանման գոտիներում կատարելը՝առաջացնում է տուգանքի նշանակում՝ տվյալ արարքի համար սույն հոդվածով նախատեսված տուգանքների չափերի կրկնապատիկի չափով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետով, ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 43.1-րդ հոդվածի 3-րդ մասի 10-րդ կետով, 4-րդ մասով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով, հիմք ընդունելով Արաքսի համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի առաջատար մասնագետի կողմից ներկայացված զեկուցագիրը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Իրավախախտող Արթուր Շիրինի Չոլոյանի նկատմամբ նշանակել վարչական տուգանք՝ ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի Գայ գյուղի վարչական տարածքում չսահմանված վայրում կենսաբանական թափոններ թափելու համար՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քառասնապատիկի չափով՝ 40.000 / քառասուն հազար/ ՀՀ դրամ:
2. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 305-րդ հոդվածի համաձայն՝ տուգանքը պետք է վճարվի սույն որոշումն իրավախախտում կատարողի կողմից իրազեկվելուց ոչ ուշ քան տասնհինգ օրվա ընթացքում՝ ֆինանսների նախարարության 900325165232 հաշվեհամարին, ստացող՝ ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնք:
3. Սույն որոշումը կարող է դատական կարգով բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 70-րդ և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ, 73-րդ հոդվածներով նախատեսված կարգով՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:
4. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կողմերին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից կամ սույն որոշմամբ ուղղակիորեն շոշափվող անձանց վերաբերյալ տեղեկությունները հայտնի չլինելու դեպքում հրապարակման պահից՝ Համայնքապետարանի և Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում:

ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ

2023 թվականի սեպտեմբերի 19
Արաքս համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 093554477
araqs.hamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 սեպտեմբերի 2023թվականի N 962-Ա

ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՇԵՆՔ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի Ապագա գյուղի բնակիչ Վարդիկ Հակոբի Ղազարյանը /ծնվ. 1945թ./ դիմել է Արաքսի համայնքապետարան՝ Ապագա գյուղի 8-րդ փողոց 30 հասցեում գտնվող, իրենց պատկանող /ըստ օրենքի ժառանգության վկայագրի՝ 2023թ-ի թիվ 7156 սեղանամատյանի/ 0,20հա օրինական հողամասին կից ավել օգտագործվող 0.0122հա հողամասի և բնակելի տան, բնակելի նշանակության օժանդակ շենք-շինությունների նկատմամբ իրավունքները վերականգնելու խնդրանքով:
Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի նոյեմբերի 13-ի N 1328-Ն որոշմամբ, հաշվի առնելով, որ բնակելի տունը և օժանդակ շենք շինությունները կառուցվել են մինչև 2001թվականի մայիսի 15-ը., հողամասը ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Վերականգնել Արմավիրի մարզի Արաքս համայնքի Ապագա գյուղի 8-րդ փողոց 30 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ Վարդիկ Հակոբի Ղազարյանի /ծնվ. 1945թ/, Կարինե Ռաֆիկի Հովհաննիսյանի /ծնվ. 1967թ/, Նաիրա Ռաֆիկի Հովհաննիսյանի /ծնվ. 1969թ/, Մելսիկ Ռաֆիկի Հովհաննիսյանի /ծնվ. 1971թ/,Կարեն Ռաֆիկի Հովհաննիսյանի /ծնվ. 1974թ/ գույքային իրավունքները՝ ճանաչել նրանց սեփականության իրավունքը 0,20հա օրինական հողամասին կից ավել օգտագործվող 0.0122հա հողամասի և բնակելի տան, բնակելի՝ նշանակության օժանդակ շենք-

շինությունների նկատմամբ՝ /բնակելի տուն՝ 17.0քմ կառուցված 1971թ, ծածկած մուտք՝ 88.1քմ կառուցված 1971թ, բնակելի տուն՝ 41.7քմ կառուցված 1971թ, բնակելի տուն՝ 25.9քմ կառուցված 1971թ, բնակելի տուն՝ 113.6քմ կառուցված 1981թ, բաց պատշգամբ՝ 72.3քմ կառուցված 1981թ, ջրավազան՝ 4.4քմ կառուցված 1990թ/: Կառույցները չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ:

2.Շենք-շինությունների մակերեսները ենթական են ճշտման համապատասխան որակավորում ստացած անձի կողմից:

3.Առաջարկել ՀՀ ԿԱԱԳԿՊԿ համապատասխան մարզային ստորաբաժանմանը գրանցել Վարդիկ Հակոբի Ղազարյանի /ծնվ. 1945թ/, Կարինե Ռաֆիկի Հովհաննիսյանի /ծնվ. 1967թ/, Նաիրա Ռաֆիկի Հովհաննիսյանի /ծնվ. 1969թ/, Մելսիկ Ռաֆիկի Հովհաննիսյանի /ծնվ. 1971թ/, Կարեն Ռաֆիկի Հովհաննիսյանի /ծնվ. 1974թ/ սեփականության իրավունքները սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի, հողամասում առկա բնակելի տան, բնակելի նշանակության օժանդակ շենք-շինությունների նկատմամբ և տրամադրել անշարժ գույքի գրանցման վկայական:

4.Բնակելի տանը տալ Հայաստանի Հանրապետություն, Արաքս համայնք, գյուղ Ապագա, 8-րդ փողոց թիվ 30 հասցե:

5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՂԱԶԱՐ ՂԱԶԱՐՅԱՆ**

2023 թվականի սեպտեմբերի 20
Արաքս համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 093554477
araqs.hamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
20 սեպտեմբերի 2023թվականի N 963-Ա

ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԹՎՈՎ 21 ՀԱՆԳՈՒՅՑԱԼԻ ԸՆՏԱՆԻՔԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 48-րդ հոդվածի պահանջներով և հիմք ընդունելով Արաքս համայնքի ավագանու 2022 թվականի մարտի 03-ի N39 որոշումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Արաքս համայնքի 2023 թվականի բյուջեի սոցիալական ֆոնդի միջոցներից 1,050,000 /մեկ միլիոն հիսուն հազար / ՀՀ դրամ Արաքս համայնքի թվով 21 /քսանմեկ/ հանգուցյալի ընտանիքի ֆինանսական աջակցություն տրամադրել ՝ համաձայն կից հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՂԱԶԱՐ ՂԱԶԱՐՅԱՆ**

2023թ. սեպտեմբերի 20
Արաքս համայնք

ՀԱՎԵԼՎԱԾ

ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի

Ղեկավարի 2023 թվականի սեպտեմբերի 20-ի

N 963-Ա որոշման

ՑՈՒՑԱԿ

N	Ազգանուն,անուն,հայրանուն	Հասցե	Անձը հաստատող փաստաթուղթ	Գումար 22 դրամ
1.	Կարապետյան Արայիկ Լևիկի	գ.Առատաշեն	BA3652973	50.000
2.	Պողոսյան Դավիթ Արտակի	գ.Առատաշեն	AP0202258	50.000
3.	Կոստանյան Ժորա Էդուարդի	գ.Գայ	ն/թ 001821115	50.000
4.	Կարապետյան Թորգոմ Գուրգենի	գ. Խորոնք	AN0660467	50.000
5.	Հովսեփյան Ալեքսան Աբիսողոմի	գ. Խորոնք	AT0560518	50.000
6.	Երանյան Ծաղկուշ Վարդանի	գ. Խորոնք	AU0358406	50.000
7.	Պետրոսյան Սուսաննա Ռազմիկի	գ. Ջրառատ	AN0713034	50.000
8.	Կանադյան Հովսեփ Բաբկենի	գ.Գրիբոյեդով	AV0580853	50.000
9.	Մարտիրոսյան Գոհար Գուրգենի	գ.Գրիբոյեդով	ն/թ 008613457	50.000
10.	Աղաջանյան Դերենիկ Բաբկենի	գ.Արաքս	AL0213928	50.000
11.	Մկրտչյան Գոհար Հրաչի	գ.Արաքս	ն/թ 012932752	50.000
12.	Թադևոսյան Կարեն Գագիկի	գ.Արաքս	ն/թ 004103958	50.000
13.	Միհասյան Արսինե Նորիկի	գ.Արաքս	751500402	50.000
14.	Աղաջանյան Հեղինե Գալուստի	գ.Արաքս	AR0344844	50.000
15.	Ղազարյան Արփինե Աշոտի	գ.Առատաշեն	AP0627064	50.000
16.	Միրզախանյան Հովհաննես Կարապետի	գ.Առատաշեն	AR0495115	50.000
17.	Դավթյան Անի Գևորգի	գ.Առատաշեն	AU0631372	50.000
18	Թեմուրյան Լիանա Հովհաննեսի	գ.Առատաշեն	ն/թ 003543568	50.000
19.	Հարությունյան Սասուն Հարությունի	գ. Ապագա	ն/թ 009394479	50.000
20.	Մուրադյան Լևոն Նորայրի	գ. Ապագա	AV0267175	50.000
21.	Խաչատրյան Քաջիկ Թովմասի	գ. Ապագա	ն/թ 009394479	50.000
				1.050.000

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գայ, Ա. Խաչատրյան 1, araqs.hamaynq@gmail.com, հեռ.՝ (093)554477

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 սեպտեմբերի 2023 թվական N 964-Ա

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի ղեկավարը քննության առնելով վարչական գործը՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի Ջրարբի գյուղի վարչական տարածքում գտնվող, Համբարձում Հարությունի Կարապետյանին սեփականության իրավունքով պատկանող 04-086-0003-0040 կադաստրային ծածկագրով, 0.0101 հա հողամասը, ոչ նպատակային նշանակությամբ օգտագործելու վերաբերյալ, այն է՝ իրականացվում է առևտրային գործունեություն, ***պարզեց հետևյալը.***

Համբարձում Հարությունի Կարապետյանը /հասցե՝ ՀՀ, Արմավիրի մարզ, Արաքս համայնք, գ. Ջրառատ,Հոկտեմբերյան փողոց, 37 տ./ թույլ է տվել Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 54-րդ հոդվածի 1-ին և 2-րդ պարբերություններով խախտումներ, այն է՝ հողամասերը ոչ նպատակային նշանակությամբ օգտագործելը, որն առաջացնում է տուգանքի նշանակում քաղաքացիների նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով, իսկ հողամասերի գործառնական նշանակությունը և հողատեսքերի ինքնակամ փոփոխելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում քաղաքացիների նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով:

Վերը նշվածի կապակցությամբ Արաքսի համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի կողմից հարուցվել է վարչական վարույթ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի և նույն օրենքի 34-րդ հոդվածով սահմանված կարգով, ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի

54-րդ հոդվածի 1-ին և 2-րդ պարբերություններով սահմանված պահանջների խախտման փաստով:

Համբարձում Հարությունի Կարապետյանը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 29.1-րդ հոդվածի համաձայն, պատշաճ ծանուցված էր վարչական վարույթի անցկացման վայրի և ժամանակի մասին /հիմք՝ «Հայփոստ» ՓԲ ընկերության կողմից 2023 թվականի օգոստոսի 29-ին տրված LO111011828AM ստացականը և 2023 թվականի սեպտեմբերի 1-ին առաքանին հանձնված լինելու վերաբերյալ էլեկտրոնային ապացույց/:

Վարչական ակտն ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի ղեկավարի 2023 թվականի հունվարի 9-ի N 4-Ա կարգադրությամբ ստեղծված հանձնաժողովի կողմից 2023 թվականի հուլիսի 14-ին կազմված արձանագրությունը:

Արաքս համայնքի ղեկավարի 2023 թվականի օգոստոսի 24-ի Համբարձում Հարությունի Կարապետյանին ուղղված Վարչական վարույթ հարուցելու մասին ծանուցագիրը և այն ստացած լինելու փաստը հավաստող ապացույց:

ՀՀ Արմավիրի մարզի Արաքսի համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի առաջատար մասնագետի 2023 թվականի սեպտեմբերի 19-ի զեկուցագիրը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները և հիմք ընդունելով վերոհիշյալ փաստերը վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

Համբարձում Հարությունի Կարապետյանի կողմից ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի Ջրարբի գյուղի վարչական տարածքում գտնվող 04-086-0003-0040 կադաստրային ծածկագրով, 0.0101 հա հողամասը օգտագործվում է ոչ նպատակային նշանակությամբ, այն է՝ իրականացվում է առևտրային գործունեություն::

Համբարձում Հարությունի Կարապետյանը, լինելով պատշաճ ծանուցված, չի ներկայացել վարչական վարույթի լսմանը:

Արդյունքում Արաքսի համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի առաջատար մասնագետի կողմից զեկուցագիր է ներկայացվել Արաքս համայնքի ղեկավարին և առաջարկվել՝ իրավախախտող Համբարձում Հարությունի Կարապետյանին ենթարկել վարչական պատասխանատվության և նշանակել վարչական տուգանք ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի վերը նշված դրույթների խախտման չափերով՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի և հիսնապատիկի չափերով՝ 150.000 /մեկ հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ:

Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 26-րդ կետի՝ համայնքի ղեկավարը, օրենքով նախատեսված դեպքերում և կարգով անձանց ենթարկում է վարչական պատասխանատվության:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ և 5-րդ կետերի՝ համայնքի ղեկավարը օրենքով սահմանված կարգով վերահսկողություն է իրականացնում համայնքի վարչական սահմաններում գտնվող հողերի նպատակային օգտագործման, հողօգտագործողների կողմից հողային օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ: Օրենքով սահմանված դեպքերում և կարգով կանխարգելում, կասեցնում և վերացնում է ապօրինի հողօգտագործումները:

Համաձայն ՀՀ հողային օրենսգրքի 8-րդ հոդվածի 1-ին մասի, 9-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի պահանջների՝ հողամասի թույլատրված օգտագործումը հողամասի օգտագործումն է դրա նպատակային և գործառնական նշանակությամբ, ներառյալ՝ սահմանված իրավունքները և սահմանափակումները: Հողամասի թույլատրված օգտագործումը սահմանվում է նորմատիվ իրավական ակտերի, հողերի օգտագործման սխեմաների, հողաշինարարական այլ փաստաթղթերի, գլխավոր հատակագծերի ու քաղաքաշինական գոտիավորման նախագծերի հիման վրա: Գյուղատնտեսական նշանակության հողեր են համարվում գյուղատնտեսական կարիքների համար առանձնացված և գյուղատնտեսական գործունեություն ծավալելու նպատակով գյուղատնտեսական մշակաբույսերի մշակման, բազմամյա տնկարկների հիմնման, խոտհնձի, անասունների արածեցման, ինչպես նաև գյուղատնտեսական այլ նպատակների համար նախատեսված հողատեսքերը: Գյուղատնտեսական նշանակության հողերը, ըստ հողատեսքերի, բաժանվում են՝ վարելահողերի, բազմամյա տնկարկների, խոտհարքների, արոտավայրերի, այլ հողատեսքերի: Նույն օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ համայնքի ղեկավարը կանխարգելում, կասեցնում և վերացնում է ապօրինի հողօգտագործումը համայնքի վարչական սահմաններում, օրենքով սահմանված դեպքերում ու կարգով հողային օրենսդրության պահանջները խախտողների նկատմամբ կիրառում է վարչական տույժեր, ինչպես նաև իրավասու մարմիններ է ներկայացնում հաղորդումներ՝ իրավախախտում թույլ տված անձանց՝ օրենքով սահմանված պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ:

Տվյալ պարագայում Համբարձում Հարությունի Կարապետյանի կողմից ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի Ջրարբի գյուղի վարչական տարածքում գտնվող իրեն սեփականության իրավունքով պատկանող 04-086-0003-0040 կադաստրային ծածկագրով, 0.0101 հա հողամասը, ոչ նպատակային նշանակությամբ է օգտագործվում, այն է՝ իրականացվում է առևտրային գործունեություն:

Արդյունքում տեղի է ունեցել ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 54-րդ հոդվածի 1-ին և 2-րդ պարբերություններով խախտումներ, այն է՝ հողամասերը ոչ նպատակային նշանակությամբ օգտագործելը, որն առաջացնում է տուգանքի նշանակում քաղաքացիների նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով: Հողամասերի գործառնական նշանակությունը և հողատեսքերի ինքնակամ փոփոխելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում քաղաքացիների նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգապատիկի չափով,

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետով, 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ և 5-րդ կետերով, ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 54-րդ հոդվածի 1-ին և 2-րդ պարբերություններով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 8-րդ և 9-րդ հոդվածներով, 43-րդ հոդվածի 2-րդ մասով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով, հիմք ընդունելով Արաքսի համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի առաջատար մասնագետի կողմից ներկայացված զեկուցագիրը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Իրավախախտող Համբարձում Հարությունի Կարապետյանի նկատմամբ նշանակել վարչական տուգանք՝ ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի Ջրարբի գյուղի վարչական տարածքում գտնվող 0.0101 հա, 04-086-0003-0040 կադաստրային ծածկագրով հողամասը ոչ նպատակային և գործառնական նշանակությամբ օգտագործելու համար՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի և հիսնապատիկի չափերով՝ 150.000 /մեկ հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ:
2. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 305-րդ հոդվածի համաձայն՝ տուգանքը պետք է վճարվի սույն որոշումն իրավախախտում կատարողի կողմից իրազեկվելուց ոչ ուշ քան տասնհինգ օրվա ընթացքում՝ ֆինանսների նախարարության 900325165232 հաշվեհամարին, ստացող՝ ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնք:
3. Իրավախախտող Համբարձում Հարությունի Կարապետյանին տալ պարտադիր ցուցում՝ երկամսյա ժամկետում իրականացնել հողամասի նպատակային և գործառնական նշանակության փոփոխմանն ուղղված աշխատանքներ, հակառակ պարագայում հողամասը բերել նախնական տեսքին և համապատասխանեցնել նպատակային և գործառնական նշանակությանը:
4. Սույն որոշումը կարող է դատական կարգով բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 70-րդ և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ, 73-րդ հոդվածներով նախատեսված կարգով՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:
5. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կողմերին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից կամ սույն որոշմամբ ուղղակիորեն շոշափվող անձանց վերաբերյալ տեղեկությունները հայտնի չլինելու դեպքում հրապարակման

պահից՝ Համայնքապետարանի և Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում:

ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ**

2023 թվականի սեպտեմբերի 20
Արաքս համայնք